Հավելված N 7
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի 29-ի
N 481- Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որակի ենթակառուցվածքների զարգացման վարչությունը (այսուհետ՝ վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, նախարարության կանոնադրության, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի (այսուհետ՝ նախարար) և նախարարության գլխավոր քարտուղարի հրամաններին, ինչպես նաև սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

2. Վարչությունն իր իրավասությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր առջև դրված խնդիրների և գործառույթների ժամանակին ու պատշաճ իրականացման համար և ենթարկվում է նախարարության գլխավոր քարտուղարին:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների բնագավառում վարչության խնդիրներն են՝

1) նպաստել արտադրանքի ներքին և արտաքին շուկաներ մուտք գործելու խոչընդոտների (Առևտրում տեխնիկական խոչընդոտներ՝ այսուհետ՝ ԱՏԽ) վերացմանը՝ ապահովելով գործող օրենսդրական դաշտում առկա տարբերությունների բացահայտում և հնարավոր լուծումների առաջադրում:

2) նպաստել մշակել, իրականացնել և համակարգել որակի ենթակառուցվածքների՝ ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, համապատասխանության գնահատման և տեխնիկական կանոնակարգման ոլորտների պետական քաղաքականությունը:

3) իրականացնել որակի ենթակառուցվածքների՝ ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման, համապատասխանության գնահատման և տեխնիկական կանոնակարգման ոլորտներում միջազգային կառույցների՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ), Եվրոպական Միության (ԵՄ), Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ՝ ԱՊՀ) և այլ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ ոլորտային համագործակցություն:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5. Վարչության կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատում է նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

6. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Տեխնիկական կանոնակարգման բաժին,

2) Ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բաժին:

IV.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչության աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումն իրականացվում է վարչության պետի կողմից:

8. Վարչության պետը՝

1) իր իրավասության շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների (կառույցների) հետ.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան հաստատման է ներկայացնում վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը.

3) պատասխանատու է վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովման, վարչությունում աշխատակիցների միջև աշխատանքի հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար.

4) կազմակերպում, բացահայտում, վերլուծում և գնահատում է վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրները, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը.

5) անմիջական հաշվետու է նախարարին:

V.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Տեխնիկական կանոնակարգման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում, իրականացնում և համակարգում է տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման բնագավառների պետական քաղաքականությունը.

2) կազմակերպում է տեխնիկական կանոնակարգերի մշակման գործընթացում նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների և մասնագիտացված կառույցների համագործակցության աշխատանքները և նախարարության իրավասության ոլորտների տեխնիկական կանոնակարգերի մշակման գործընթացը.

3) կազմակերպում և իրականացնում է տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման բնագավառներում միջազգային համագործակցության, ինչպես նաև համապատասխան իրավական ակտերի համադրության աշխատանքները.

4) իրականացնում է պետական կառավարման, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից ներկայացվող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն, դրանց վերաբերյալ առաջարկությունների տրամադրում.

5) ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ է ներկայացնում տեխնիկական կանոնակարգման և համապատասխանության գնահատման բնագավառներին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ և քննարկում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների կողմից մշակվող, համապատասխան ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերը և համապատասխան դիրքորոշում է տրամադրում.

6) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության և ԵՄ, ԵԱՏՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերին անդամակցելու արդյունքում (դրանց առկայության դեպքում) առաջացող տեխնիկական խոչընդոտների ոլորտի օրենսդրությունների ուսումնասիրություն, առկա տարբերությունների բացահայտում և հնարավոր լուծումների առաջադրում.

7) ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, քննարկման, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգման ոլորտում ծագած խնդիրներին լուծումներ տալու նպատակով կազմակերպում է համապատասխան քննարկումներ,

տեսակոնֆերանսներ՝ շահագրգիռ մարմինների և գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ.

8) մասնակցում է տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ սպառողների շահերի իրավունքների պաշտպանության իրականացմանն ուղղված միջոցառումներին.

9) կազմակերպում և վերլուծում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրները և աշխատանքները:

10. Ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում, իրականացնում և համակարգում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման բնագավառների պետական քաղաքականությունը.

2) կազմակերպում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, հավատարմագրման բնագավառների քաղաքականության մշակման գործընթացում Նախարարության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների և մասնագիտացված կառույցների համագործակցությունը.

3) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության և ԵԱՏՄ, ԵՄ, ԱՊՀ, ինչպես նաև միջազգային պայմանագրերով (դրանց առկայության դեպքում) նախատեսված որակի ենթակառուցվածքների ոլորտի օրենսդրությունների մեջ առկա տարաձայնությունների բացահայտումը և լուծումների առաջադրումը.

4) կազմակերպում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման բնագավառներում միջազգային համագործակցության աշխատանքները.

5) մասնակցում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման բնագավառներում միջազգային համագործակցության համակարգման աշխատանքներին և համատեղ զարգացման ծրագրերի ձևավորմանը.

6) ՀՀ օրենսդրության կատարելագործման նպատակով մշակում և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ է ներկայացնում ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման բնագավառներին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, քննարկում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմինների կողմից մշակվող, համապատասխան ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերը և համապատասխան դիրքորոշում է տրամադրում.

7) կազմակերպում և իրականացնում է պետության կողմից կանոնակարգվող ոլորտներում համապատասխանության գնահատման մարմինների նշանակման գործընթացը, Նախարարության կայքում հրապարակում է նշանակված համապատասխանության գնահատման մարմինների ցանկը և վարում է համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանը.

8) կազմակերպում և իրականացնում է արտադրանքի ցուցանիշների չափումների (փորձարկումների) ճշգրիտ արդյունքներ ապահովող էտալոնային (արբիտրաժային) լաբորատորիաների ճանաչման գործընթացը.

9) կազմակերպում և իրականացնում է համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հետ կապված գործընթացը, ինչպես նաև ապահովում է համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման գրանցամատյանի վարումը.

10) ԵԱՏՄ, ԵՄ, ՀՀ գործող և նոր մշակվող՝ ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման բնագավառներում գործող իրավական ակտերի պարզաբանման, քննարկման, ինչպես նաև նշված ոլորտներում ծագած խնդիրներին լուծումներ տալու նպատակով կազմակերպում է համապատասխան քննարկումներ, տեսակոնֆերանսներ՝ շահագրգիռ մարմինների և գործարար միջավայրի ներկայացուցիչների հետ համատեղ.

11) իրականացնում է համապատասխանության գնահատման մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային տեղեկատվության հավաքագրումը, ամփոփումը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրումը.

12) իրականացնում է ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ոլորտներում Նախարարության ենթակայությամբ գործող մարմինների կողմից իրականացված գործունեության եռամսյակային հաշվետվությունների հավաքագրման ու ամփոփման, որակական և քանակական վերլուծությունների հիման վրա եզրակացությունների կազմման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրման գործընթացը.

13) իրականացնում է հավատարմագրման ազգային մարմնի գործունեության մշտադիտարկում.

14) կազմակերպում և վերլուծում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրները և աշխատանքները:

VI.ՎԱՐՉՈՒԹԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

11. Վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանումները ղեկավարում են Բաժնի պետերը:

12. Բաժնի պետերն անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետին:

13. Բաժնի պետերի բացակայության դեպքում նրանց փոխարինում է Վարչության պետը, Վարչության մյուս Բաժնի պետը կամ համապատասխան ստորաբաժանումների մասնագետներից որևէ մեկը՝ ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ:

14. Բաժնի պետերն իրենց հանձնարարված աշխատանքները կատարում են սույն կանոնադրությանը համապատասխան: